

աչքին նախանձուտ արհեստաւորը, յետ քսան ամաց անպատիժ յանցանաց: Պատանի արհեստաւորին որդին, գիշերատեն քաջութեամբ ինք զինքը նեղոս գետին մէջ ձգելով, մահացու կերպով հարուածեց խռովարարը և սպաննելով գաղտուկ թաղեց: Երկրորդ օրը ֆարաւոն իմանալով անոր մահը՝ աջ աչքին արհեստաւորին որդին յաջորդ անուանեց մեռնողին տեղ՝ մեծամեծ պարգևներով: Դարձաւ նորէն երջանկութիւնը և խաղաղութիւնը սփինքսին երկու աչաց հորիզոնին վրայ, և անկէ վերջը ոչ մի ինչ կրցաւ խռովել աջ աչաց արհեստաւորին անդորրութիւնը:

Երջանիկ արհեստաւորը, կը կարծէին թէ յաւիտենականութեան համար կ'աշխատին, և կը մեռնէին այն մխիթարական յուսով՝ թէ իրենց գործըն պիտի հասնի անմիաս 'ի զարմացումն ապագայ ժամանակաց: Եւ ոչ մտքերնէն կրնար անցնիլ թէ հանդերձելոյն մէջ յիմար աշխարհակալներէն մին, Կամբիւսէս մը, Եգիպտոսի տիրելէն և ամեն բան կողոպտելէն ետքը, պիտի ժողովէ բանակը սփինքաց առջին և հրամայէ խանգարել անոնց աչքն, որոց վրայ այնչափ աշխատանք եղած էին:

ՊՈՍՊԵԱՏԻ ՄԷՋ ԳՏՆՈՒԱԾ ՆՈՐ ՄԱՀՃԱԿԱԼ

Անցեալ տարւոյն Պոմպէայի պեղմունքէն հանուած զանազան իրաց մէջ շատ նշանաւոր է պղնձէ մահճակալ մը, որուն շքեղութենէն ու զարդերէն յայտնի է թէ մեծատուն պատրիկի մը պալատան կազմածներէն եղած ըլլայ: Թանգարանին բազմազգի կահուց մէջ առաջին կարգի անմիաս պահուածներէն մէկն է այս մահճակալ: Զարմանալի է վրան գտնուած զարդուց պայծառ դրոշմն՝ որ գրեթէ երկու հազար տարի ետքը Պոմպէայի արուեստական ճարտարութեան և ընտիր ճաշակին ապացոյց է:


ՀԱԼԷՊ

Գեղեցիկն Հալէպ «Արեւելից Հռոնոսն», կը տարածուի ընդ մէջ գեղածիժաղ դալարութեան և ծառոց. և ունի բնական դրից այնպիսի գեղեցիկ յատկութիւն, որ չի կրնար 'ի բաղդատութիւն գալ եւրոպական քաղաքաց հետ: Անդ ուր կը բարձրանայ այսօր Հալէպ, կ'արածուէին երբեմն Հրէից հօրը Աբրահամու խաչինքը: Անդ աւելի ետքը յաղթեց Դաւիթ Ադրաազարու Սուբայ թագաւորին զօրացը, և Քսենոփոն իր տասն հազար Յոյն դիւցազուններովն անցաւ զՇալիւս գետ ձկնաւէտ, և անկէց դարձեալ անցաւ Մեծն Ալեքսանդր երբ կը հալածէր զԴարեհ կողոման:

Հնագէտք կը համարին որ այս քաղքին Հալէպ անունն յառաջ եկած ըլլայ քարանց այն զանազան գոյներէն որովք շինուած են տուներն: Բայց տեղաբնակ ժողովուրդը ուրիշ կարծիք և աւանդութիւն մ'ունի, զոր և ապացուցանէ այսպիսի պատմութեամբ:

Երբ մեր առաջին հայրը, կ'ըսէ, Աբրահամ, կը ճանապարհորդէր Քանանու մէջ, կեցաւ քիչ մ'ատեն 'ի Հալէպ, և կանգնեց իր վրանը բլրան մը վրայ՝ ուր կայ հիմա բերդ՝ երբեմն զօրաւոր 'ի պաշտպանութիւն քաղաքին: Նահապետն ունէր հետը այնպիսի գեղեցիկ խայտաբղէտ կով՝ որուն նմանը մինչև ցայնժամ չէր տեսնուած: Անոր համար մեծ բազմութիւն մարդկան մաղցի կ'ելլային բլրան վրայ պարարելու իրենց աչքը, տեսնելով զկովը և խմելով կաթէն: Իսկ գնացողները կը հարցնէին դարձողներուն. «Նահապետը կ'թեց իր խայտաբղէտ գոյնզգոյն կովը»: Եւ որովհետեւ արաբական լեզուաւ հաշիւս կը նշանակէ կթեց, ուրեմն ասկէց կը հետեցնեն որ քաղքին Հալէպ անունն այս դէպքէն յառաջ եկած ըլլայ:

Պէտք չէ շփոթել զՀալէպ Էպրի Հալէպին հետ, որ ուրիշ քաղաք է, և կ'իյնայ վեց փարսախ հեռու անապատին



ՄԱՍՈՒՆԻՆԻ ՄԱՍՈՒՆԻՆԻ ՄԱՍՈՒՆԻՆԻ

մէջ : Իսկ այն Հալէպն որոյ վերայ կը խօսիմք, կ'իյնայ գրեթէ երեք հարիւր մեղր վեր քան զմակերևոյթն Եփրատ գետոյ, $36^{\circ} 11' 32''$ հիւսիսային լայնութեան տակ : Կը տարածուի կիսաբոլոր 'ի հիւսիսոյ արեւմտից 'ի հարաւային արեւելս, և ունի մէջը վաղեմի միջնաբերդ : Այս միջնաբերդը որ շրջապատեալ է խրամով, ունի իր մէջ երկու զօրանոց, երկու ջրհոր, կործանեալ բերդ մը և երեք կամ չորս հարիւր տուն տապալեալ յերկրաշարժէ, և յանհոգութենէ և յանքաղաքականութենէ ժողովրդեան թողեալ աւերակ վիճակի մէջ :

Բուն քաղաքը որ մեծապէս փնասեցաւ 1822 տարւոյն երկրաշարժէն, երեք մաս կը բաժնուի, հին քաղաքը որ խարխուլ պարսպաց մէջ բանտեալ է, նոր քաղաքը որ այլ և այլ թաղեր ունի, և արուարձաններն որ անպարիսպ են : Ամեն ազգ և ամեն կրօնք իր առանձին թաղն ունի : Տուներն միայարկ են, ու շաղախէ և աւաղէ բաղադրեալ նիւթէ երդիքով պատած են, որով անձրեն ներս չի թափանցեր : Ճամբաներն թէ և սալայատակ թէ և ըստ բաւականի վայելուչ են, բայց սաստիկ անձուկ ըլլալովսին մեծ սրգել են քաղքին կենդանութեանն և յառաջադիմութեան, մանաւանդ որ հոս ալ արեւելեան ուրիշ քաղաքաց պէս անպակաս են թափառական շուներն, էշերն ու ձիեր : Տեղ տեղ այս ճամբաներն ծածկուած են կամարած և զմբէթներով, որ զօրաւոր տպաւորութիւն կ'ընեն օտարականին վրայ : Այս կամարներն այնչափ ամրաշէն և հաստատուն են, և այնպէս կը նմանին աւատական դղեկաց դրանց, որ տեսնողն ինք զինքն ասպետաց և խաչակրաց ժամանակ կը կարծէ : Երեկոյեան դէմ մասնաւորապէս ֆրիստոնէից փողոցաց մէջ այնպէս կը կարծէ ճանապարհորդն որ քանի մը դար դէպ 'ի ետ գացած ըլլայ : Տուներուն ձևն որ զօրաւոր դղեկաց կերպարան մ'ունին, և նեղ դռներն որ ամրացեալ և պատըսպարեալ են մեծամեծ քամերով, ամե-

նայն ինչ կը յիշեցնէ ասպետաց ժամանակն : Մարդիկ փողոցաց մէջ, մարդիկ դրանց վրայ, և գողցես մահուան լուութիւն մը. բայց երբեմն հազիւ կը տեսնուի ընդ երկայնութիւն տանց կնկան մը երթալը սպիտակ տառատուկաւ, հաւատաւոր կուսանաց նման : Տառատուկ ըսածնիս այնպիսի զգեստ մ'է որ գլխէն սկսեալ ինչուան ոտքը կը հասնի և կը ծածկէ զբոլոր անձը, ազատ թողլով միայն քիթը և աչքերը. և կանայք շատ վայելուչ կերպով կը յարմարեն այս զգեստը իրենց վրայ :

Թէպէտ քաղաքն և կամ տուներն արտաքուստ այսպէս տխուր երևոյթ մ'ունին, բայց եթէ ներս մտնեմք, կը գտնեմք արեւելեան ճոխութեան ամենայն պերճանքն : Ընդհանրապէս մեծամեծաց տուներն կենդրոնական սալայատակ և գեղեցիկ գաւիթ մ'ունին, և 'ի նմա ջրոյ ցայտ որ կը դգըչէ : Ծաղկազարդ ծառեր, թռչնարաններ, ծաղկանց ձմերոցներ 'ի կենդանութեան կը պահեն ներքին կեանքը : Տունը կը բաղկանայ 'ի պզտի բաժանեալ մասանց, բայց մետաքսէ բազմոցներով զարդարած հասարակաց ընդարձակ սրահ մը բոլոր տնեցիքն 'ի մի վայր ժողովէ :

Հալէպ բաց 'ի իր հանգիստ և մեծասպաս տուներէն, ունի և մեծ բազմութիւն մը հոյակապ պարտիզաց, ոմանք յարուարձանս քաղաքին, և այլք քաղքէն քիչ հեռու : Ամեն օր մարթ է երթալ այս տեղուանքն և հանգչել հոտաւէտ ծառոց տակ, և մոռնալով դադաթնահայեաց արեգական տապն, ընկողմանիլ դալարագեղ կանաչութեան մէջ և կամ վազող ջրոյ մը եղերքը և զուարճանալ այսպիսի կենօր : Իրիկունը արեգակը մարը մտնելէն ետքը, և յետ տիրելու գիշերային մթութեան, երբ ամենայն առարկայք իրենց ձեւ կը կորուսանեն ու կը խառնակին, բոլոր Հալէպցիք իրենց հովանոցին վրայ կ'ելլան, դիտելու շրջակայ անձայն և ցամաքեալ անապատին ընդարձակութիւնը : Այս հովանոցներն այնպէս իրարու մօտ են որ զիրենք բաժնող պզտի

պատերն բառնալով, մարթ է անոնց ամբողջութիւնը աշտարակ քաղաքին անուանել:

Երբեմն այս քաղաքիս բնակիչքը մինչև 200 հազար կը համրէին. բայց ասիկա չափազանց երևի մեզ, վասն զի աւելի ճշգրտախօս աշխարհագիրք 100 հազար կը համրեն: Իսկ վերջերս նոր աշխարհագիր մը, 110 կամ 100 հազար բնակիչ կը համրէ. որոցմէ 70 կամ 80 հազարը Մահմետականք են, 25 կամ 35 հազարը Քրիստոնեայք, և 6 կամ 7 հազարն Հրեայք: Բայց Քրիստոնեայք ալ կը բաժնուին. Հռովմէական կաթողիկէ, Մարոնիտք, Արևելեան և Հռովմէական Յոյնք, Արևելեան և Հռովմէական Հայք, Ասորիք և Բողոքականք: Հին քրիստոնէից եկեղեցիներն, որոնց մէջ ամենէն համբաւաւորն է Հեղինէ դշտոյին շինածը, երբեմն 'ի մզկիթ փոխուեցան 'ի ձեռն մահմետականաց: Նոր մզկիթաց մէջ ամենէն գեղեցիկն է Օսմանիէն, զոր կառոյց Օսման բաշա կառավարիչ Հալէպայ:

Հալէպցիք, եթէ Քրիստոնեայք և եթէ Մահմետականք անուանի են իրենց բարուց քաղցրութեամբը. չունին այն մոլենախանձ բարքն, ինչպէս Հրեայք, որք կ'ատեն մինչև իրենց եւրոպաբնակ կրօնակից եղբարքը, զորս կը բամբասեն իբրեւ անհաւատարիմ Հին կտակարանին վարդապետութեանցը:

Հալէպ դարձեալ իբրեւ վաճառականական քաղաք մեծ կարեւորութիւն ունի: Հալէպ իբրեւ մթերանոց Հայաստանի և Տիարպէքիւրի, կ'ընդունի Պաղտատու և Պարսկաստանի կարաւաններն, և ունի վաճառականական հաղորդականութիւն Հնդկաստանի, Եգիպտոսի և Եւրոպիոյ հետ: Ամեն տարի իր մէջէն կ'անցնին այն մեծամեծ կարաւաններն, որ ժողվելով Պարսկաստանի նախանձայոյդ Մահմետականքն, այցելութեան կը տանի Մէքքէ Մահմէտի գերեզմանին: Այս կարաւաններն որ երբեմն հինգ վեց հազար վաճառականներէ կը բաղկանան, կը տանին հետերնին շալի ծրարներ, սաթէ ծխափող-

ներ, ոստայնանկեալ հիւսուածքներ, օթոցներ, մեծագին նարկիշէներ, այլ և այլ տեսակ ակունքներ, ձիեր, փառաւոր զէնքեր, միով բանիւ բոլոր պարսկական գաւառաց արուեստական գործիներ: Եւ կը փոխանակեն այս զեղխութեան այլ և այլ առարկաներն իրենց պէտք եղած այլ և այլ նիւթոց հետ: Իսկ տեղական վաճառականութեան գլխաւոր նիւթերն են բամբակ, խոշոր կտաւներ որ կը շինուին գիւղօրէից մէջ, կերպասէ առարկաներ, պղինձ, ստե, այծու մազ, ֆիւրտստանի գղտոր և պիստակ շրջակայ կողմերէն: Եւ ահա այս պատճառաւ Հալէպ Օսմանեան պետութեան գլխաւոր քաղաքներէն մին կը համարուի:

Հալէպցիք աշխոյժ և կենդանի դէմք մ'ունին, և սակայն քաղաքը ու իր շրջակայ տեղուանքն մասնաւոր հիւանդութեան մ'ենթակայ է: Այս հիւանդութիւնը կը սկսի պզտի պալարով՝ որ իսկզբան տապագին է, և յետոյ կը փոխուի կ'ըլլայ վէրք՝ եղնգի լայնութեամբ: Այս վէրքը գրեթէ միշտ տարի մը կը տևէ, և սովորաբար երեսաց վրայ կ'ելլայ և սպի մը կը թողու որ կը տգեղացունէ բնակչաց մեծ մասը: Եւ օտարականքն իսկ որ կ'անցնին այն կողմերէն, ենթակայ են նոյն հիւանդութեան ազդեցութեանցը: Ոմանք 'ի ճանապարհորդաց այս հիւանդութեան պատճառ կը համարին ջրոց յատկութիւնը, և ասիկա այնչափ աւելի իրաւամբ, որչափ որ նոյն հիւանդութիւնը կը գտնուինաւ Հալէպ քաղաքին շրջակաները և Տիարպէքիւրի գիւղօրէից մէջ:

Երբեմն Հալէպցիք փոխանակ թղթատարի՝ կրթած աղանիներ կը գործածէին իբրեւ արագաքայլ սուրհանդակք ընդ մէջ Հալէպի և Պաղտատու: Եւ ահա այս կերպով կը կարգաւորէին թեւաւոր թղթատարութիւնը: Զագ ունեցող զոյգ մը արու և էգ աղանի կ'առնուին, և կը տանէին հոն ուսկից կ'ուզէին որ ետ դառնայ: Երբ թռչունն կը հասնէր հոն, թաթերուն տոմսակը կը կապէին և կ'արձըկէին: Խեղճ թռչունն անհամբեր

տեսնելու իր ձագերը, մէկէն կը թռու-
չէր և քանի մը ժամու մէջ կը հատա-
նէր կ'անցնէր այն միջոցն որ կը բաժնէր
իրմէ իր ձագերն, այս է Պաղտատէն մին-
չև Հալէպ: Իսկ Հալէպ քաղաքն դիւրաւ
կը տեսնուի 'ի հեռաւորութենէ, վասն
զի իր դիրքն այնպէս է, որ մեծ աշտա-
րակի նման կը բարձրանայ աւազուց
լայնածաւալ Ովկիանու մէջ:

Հալէպ քաղաքին մէջ կը տեսնուին
նախկին թագաւորաց գերեզմաններն,
համբաւաւոր Հրէից ժողովարան մը,
գեղեցիկ պարտեզներ, և այն ջրանցքը
զոր Հեղինէ դշտոյն շինել տուեր էր,
խմելի ջուր բերելու քաղաքը չորս փար-
սախ տեղ հեռաւորութենէ: Նոյնպէս
քաղաքին շրջակայ կողմերն գրեթէ 10
փարսախ հեռաւորութեամբ, կ'երեւին
տակաւին աւերակաց մնացորդներ, ու
րոնցմէ ոմանք յայտնապէս հռովմէա-
կան իշխանութեան դարուն կը վերա-
բերին: Այս աւերակներն ըստ մեծի
մասին մեծահատոր արձանաց մնա-
ցորդներ են, յորոց ոմանք մինչև քա-
ռասուն և յիսուն ոտք երկայնութիւն
ունին: Կը գտնուին դարձեալ յոտին՝
որմոց բեկորներ 'ի վեր ունելով կամար-
ներ, որոնք անշուշտ ժամանակաւ մաս-
էին մեծակառոյց տաճարաց: Այս յի-
շատակարանաց շատերն ըստ վիճակի
մէջ են, և կը ծառայեն կարաւանաց
իրրև ապաստանարան գիշեր ատեն:
Նոյն յիշատակարանաց քովերն կը տես-
նուին միջոց ընդ միջոց հին ճանապար-
հաց մնացորդներ, ջրանցից բեկորներ
ժայռից կողերուն վրայէն կախուած:
Այս աւերակներն կը ցուցնեն որ եր-
բեմն նոյն կողմերը հռովմայեցւոց կա-
րևոր կայարան մ'եղած ըլլայ, և հաւա-
նաբար Հնդկաստանի ընդ Արևմտից ու-
նեցած վաճառականութեան անցու-
դարձի տեղ:

Բայց վերջին երեսուն տարուանս մէջ
մեծ կորուստ ըրաւ Հալէպ վաճառա-
կանութեան մասին, եւրոպական վա-
ճառուց հոն մտնելուն համար. բայց
որոնք որ տեսած են այս քաղաքս՝
ամենքն ալ միաբերան գոված են: Բը-

նակչաց մարդասիրութեամբն, գեղե-
ցիկ դրիւքն, ճանապարհաց վայելչու-
թեամբն, յիշատակարանաց փառաւո-
րութեամբն, տանց ներքին պերճու-
թեամբն, իրաւցնէ « Ասորւոց ադա-
մանդն է », ինչպէս անուանեց զայն
ասկէ 300 տարի առաջ Պ. Ռաւփօլֆ,
և Արևելից Հռենոսը », ինչպէս կոչեց
ճանապարհորդն Տը Սալ:

ԵՓԵՍՈՍԻ ԱՆԱՀՏԱՅ ՄԵՀԵԱՆԸ

Եփեսոսի Անահտայ մեհեանը, աշխար-
հիս եօթն հրաշալեաց մին, բայց ան-
ծանօթ մնացեալն յայնքան դարուց
հետէ, վերջերս 'ի լոյս ելաւ արդեամբ և
ջանիւք Պ. Վուտհնայուդին, Զմիւռնիա
քաղաքէն երեսուն և վեց մղոն հեռու
Այասուլուք անուն տաճկաբնակ գեղին
մէջ: Թէ և այս մեհեանն տակաւին յո-
տին էր Քրիստոսի թուականին առա-
ջին դարուն, և Պօղոս առաքեալ քա-
րողեց անդ զքրիստոնէութիւն, բայց
յանցանել ժամանակաց անյայտ մնա-
ցեր էր, միայն այս չափն յայտնի էր
որ Գոթացիք կործանեցին զայն յեր-
րորդում դարու և աւարեցին բոլոր մէ-
ջի հարստութիւնը. բայց և զայս գի-
տեմք որ բոլորովին հիմնայատակ և
անյայտ ընողն երկրաշարժն և ջուրց ու-
ղղմունքն եղաւ: Շատ զարմացաւ անդ-
դիացի հնայոյզն երբ քննեց և իմացաւ
որ մեհենին մնացորդներն մզկթի մը
շինութեան գործածուեր էին:

Այս մեհեանը բաղդատելով ուրիշ
մեհենաց հետ, աւելինոր էր ժամանա-
կաւ, և հնագոյն շէնքի վրայ շինուած
յոնիական ճարտարապետութեամբ:
Մեծին Ալեքսանդրի ժամանակ դեռ
լմընցած չէր շէնքը, և այս անտի ստոյգ
է, որ մակեդոնացի աշխարհակալն ա-
ռաջարկեց Եփեսեցւոց իր վրան առ-
նուլ շինութեան բոլոր ծախքը, պայմա-
նաւ որ իր անունն դրուի մեհենին ճակ-
տին վրայ. բայց Եփեսացիք բոլորովին
մերժեցին այս առաջարկութիւնը, ին-